ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՂԵՌՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

ՄԵՐԻ ՔԵՇԻՇՅԱՆ

Հայ ժողովուրդն իր կազմավորման արշալույսից սկսած, դարերի ու հազարամյակների ընթացքում ստեղծել ու հետագա սերունդների է թողել բազում հոգևոր ու նյութական արժեքներ, որով պատմության մեջ մնացել է որպես ստեղծող, արարող, շինարար ժողովուրդ: Սակայն հնագույն ժամանակներից սկսած, իր պատմական ճակատագրով, միշտ էլ հանդիսացել է պատերազմների թատերաբեմ, կրելով ոչ միայն մարդկային, այլև հսկայական նյութական և հոգևոր մշակույթի կորուստներ: Այդուհանդերձ, ավերիչ պատերազմներից և օտարների ասպատակություններից հետո էլ, հայ ժողովուրդը վեր հառնելով գոյատևել է ու նորից շենացրել պատմականորեն իրեն բաժին հասած օրրանը, կառուցել նոր բերդ-շեներ, քաղաքներ, գյուղեր, պաշտամունքային նշանակության և կրթական օջախներ, վանքեր ու եկեղեցիներ, նրբաքանդակ խաչքարեր, ստեղծել զարգացած ու ինքնատիպ մշակույթ:

XIX դարի վերջը և XX դարի սկիզբը հայ ժողովրդի համար դարձավ ճակատագրական: Ինչպես հայտնի է 1890-ական թթ. կատարված Համիդյան արյունոտ ջարդերին հաջորդեց 1915թ., Արդուլ Համիդի ոճրագործ քաղաքականությունը որդեգրած և երիտթուրքերի կողմից կազմակերպված հայերի ցեղասպանությունը: Կոտորածներին ուղեկցում էր նաև նյութական արժեքների սիստեմատիկ ոչնչացման ոչ պակաս ահավոր բարբարոսությունը, որն, ըստ էության, ցեղասպանության երկրորդ կողմն էր: Ակնհայտ է, որ ընաջնջելով հայ ժողովրդի խոշոր զանգվածին, նրա ստեղծած մշակութային արժեքները, թուրքերը նպատակ ունեին պատմության ասպարեզից ջնջել այն ամենը, ինչը կապված էր հայ ժողովրդի հետ:

Աննկարագրելի է 1915 թվականին հայ ժողովրդի կրած մշակութային ողջ կորուստը:

Փաստերը խոսում են այն մասին, որ Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի հայաբնակ շրջանների մշակութային գենոցիդը Հայոց ցեղասպանության բաղկացուցիչ մասն է: Ջարդարարները, առաջնորդվելով Թալեաթի՝ Հալեպի տեղահանության գործերով կոմիտեին ուղղված հրահանգով. «... ամեն կերպ ջանալ ոչնչացնել բուն «Հայաստան» անվանումը Թուրքիայում»[1], տեղահանության ընթացքում ոչնչաց-

րել են մեր ազգային դարավոր քաղաքակրթության բազում նյութական, մշակութային արժեքներ:

Սակայն նախքան 1915թ. մշակութային կորուստներին անդրադարձը նշենք, որ նմանատիպ կորուստներ ունեցել ենք նաև 1894-96թթ. ջարդերի ժամանակ, որի արդյունքում ոչնչացվել կամ մզկիթի են վերածվել 568 եկեղեցի: Ըստ Մ. Օրմանյանի տեղեկության 1894-96թթ. ջարդերի ժամանակ «վանք չէ եղած որ անձեռնմխելի ըլլայ, եկեղեցի չէ մնացած, որ կա՛մ քանդուած, կա՛մ պղծուած, կա՛մ մզկիթի փոխարկուած չըլլայ»:[2]

Ինչպես հայտնի է՝ պատմական Հայաստանի և Թուրքիայի հայաբնակ ամեն շրջան անհիշելի ժամանակներից ունեցել է իր վանքը, եկեղեցին, ուխտատեղին և սրբավայրը, հոգևոր-կրոնական իշխանության կենտրոնը: Վանական հաստատություններ լինելուց զատ դրանք նաև ուսումնական, գրչության և արվեստի կաճառներ էին և պատմականորեն նշանակալի դեր են ունեցել հայ ժողովրդի կրոնական, ազգային և մշակութային կյանքում:

1896թ. տեղեկագրությունից հայտնի է դառնում, որ մահմեդական խուժանն իր կատաղությունն առաջին հերթին թափում էր հայկական կրոնական և կրթական կենտրոնների, մատենադարանների վրա: Կողոպտվել և այրվել են Վասպուրականի Վարագա, Նարեկա, Կարմրավոր, ս.Գրիգոր Լուսավորիչ, Մեծոփա, Անգղի ս. Աստվածածին վանքերը, նաև Աղթամարի ս. Խաչ եկեղեցու պահոցը, ուր գտնվել է եկեղեցու ողջ հարստությունը. նույն ճակատագրին են արժանացել նաև Լիմ և Կտուց անապատների պահոցները, ս. Էջմիածնի վանքը:[3] Միայն Նարեկա և Վարագա վանքերից կողոպտված շարժական և անշարժ գույքի արժեքը հասել է 1000 թուրքական լիրայի, ոչնչացվել են նաև մատենադարանները: Կողոպտվել է Նարեկա վանքում տարիներ շարունակ պահվող Կենաց փայտի մասունքը և այլ մասունքներ, իսկ միջնադարյան հայ քնարերգու Գրիգոր Նարեկացու (Xդ.) գերեզմանն, որ դարեր շարունակ եղել է սրբավայր և ուխտատեղի, ավերվել ու հիմնովին ոչնչացվել է:[4]

Ի թիվս այլոց ամբողջովին կողոպտվել է Դիարբեքիրի ս. Աստվածածին վանքը, որ հայտնի էր իր պատմությամբ և արժեքավոր հնություններով:[5]

1896թ. Կ.Պոլսի հայոց պատրիարքն իր ծանուցագրով թուրքական քաղաքական իշխանություններին հայտնում է, որ «քանդուածներն ու վնասուածները հայոց սրբարաններն, թիւով 400-էն աւելի» են:[6]

1894-96թթ. Բարերդի (Էրզրումի նահանգ) գյուղերում կողոպտվել, և մասամբ կործանվել են 36 եկեղեցի,[7] Երզնկայի շրջանում 12 վանք:[8] 1896-ին կողոպտվել և այրվել է Խիզանի (Բիթլիսի նահանգ) ս. Խաչ վանքը և գրադարանը, ուր եղել է 1000-ի հասնող արժեքավոր գրքեր,[9] իսկ Սպարկերտում (Բիթլիսի նահանգ) հիմնահատակ ավերվել են բոլոր եկեղեցիները և վանքերը, որոշ մասը վերափոխվել են մզկիթի:[10]

Մշակութային արժեքների ահռելի կորուստ է տեղի ունեցել Առաջին աշխարհամարտի տարիների: Ըստ Մ. Օրմանյանի, Արևմտյան Հայաստանում 1912-ին եղել են 2200 վանք ու եկեղեցի[11], որոնցից մեծագույն մասը ոչնչացվել են:

Գևորգ Մեսրոպը, նշելով որ հնարավոր չէ ճշգրիտ թվերով ու փաստերով հաշվառել կորուստը գրում է. «Չենք գիտեր, թէ ինչ էր մեր թիւը, իսկական մեր ազգապատկան հարստութիւնը կազմող մեր վանքերուն, մեր

եկեղեցիներում, ժողովարաններում, վարժարաններում, գեղարվեստական, մատենագրական, ճարտարապետական եւ այլ թանկագին ժառանգութիւններում տեսակն ու քանակը, որակն ու արժեքը...»:[12]

Ըստ ֆրանսիական բանակի սպա Ռ. Հյուպեռի (որը Արեւմտյան Հայաստանում ուսումնասիրել է հայկական և հունական եկեղեցական, նաև մշակութային այլ կոթողներ), 1898-ին կազմած տեղեկագրի Արեւմտյան Հայաստանում եղել է 218 հայկական վանք և 1740 եկեղեցի:[13] 1904-ին Կ.Պոլսում հրատարակված պաշտոնական ցուցակագրությունը վկայում է, որ Օսմանյան պետությունում եղել են 228 հայկական վանք և 1958 եկեղեցի:[14] Պողոս Նուբարի և Ավետիս Ահարոնյանի կողմից 1919-ին Փարիզում ստորագրած հուշագրի համաձայն՝ Թուրքիայի տարածքում նշվում են լրիվ կամ մասամբ կործանված 83 եպիսկոպոսանիստ առաջնորդարաններ, 1860 եկեղեցի և մատուռ, 229 վանք:[15] Գ. Մեսրոպի ուսումնասիրության համաձայն ողջ Թուրքիայի տարածքում եղել է 210 վանք, 700 վանական եկեղեցի, 1639 ծխական եկեղեցի, ընդամենը՝ 2549 եկեղեցական միություն: Ի դեպ՝ նրա ցուցակում նշված չեն եղել կաթոլիկ հայ համայնքի վանքերն ու եկեղեցիները: Հայ բողոքականներն ունեցել են 310 ժողովարան:[16]

Հ. Գ. Ղազարյանի հավաստմամբ, Արեւմտյան Հայաստանում 1914-18թթ. թալանվել և ավերվել է 2050 հայկական եկեղեցի և 203 վանք:[17]

Ըստ Ա. Խ. Սաֆրաստյանի, Առաջին համաշխարհային պատերազմից առաջ (1912-1913թթ.), Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքարանի պաշտոնական ցուցակների ոչ լրիվ տեղեկությունների հիման վրա Օսմանյան կայսրությունում գործել են մոտավորապես 1500-ից ավել եկեղեցի և վանք:[18]

1974 թվականին ՅՈՒՆԵՍԿՈ-ի կողմից կատարված 913 կառույցների ուսումնասիրումը ցույց է տվել, որ 464-ը անհետացել են, 252-ը ավեր վիճակում են, իսկ 197-ը կիսականգուն:[19]

Կ.Պոլսի Հայոց պատրիարք Շնորհք Արք. Գալուստյանը 1980-ին վկայում է, որ 2000 հայկական եկեղեցիներից մնացել են 6-ը:[20]

Վերջին տարիների ուսումնասիրության համաձայն և մոտավոր համադրումներով, Օսմանյան կայսրությունում եղել են 3500 վանքեր, եկեղեցիներ, կրոնական այլ հաստատություններ, որոնցից այսօր մնացել են 500-ը:

Ինչպես հայտնի է՝ արևմտահայոց վանքերն ու եկեղեցիները ունեցել են ավելի քան հարուստ ունեցվածք:

Այդպես՝, Չնքուշի (Դիարբեքիրի նահանգ) հայոց վանքը ունեցել է 550 կտոր արծաթե և ոսկե սպասք, Արմաշի (Իզմիրի նահանգ) Չարխափան ս. Աստվածածին վանքը՝ 350 կտոր արժեքավոր սպասք: Գ. Մեսրոպի մոտավոր հաշվումներով կրոնական հաստատություններում եղած միայն արծաթե և ոսկե սպասքի ընդհանուր քանակը եղել է 600000 կտոր:[21]

1915թ. Մեծ եղեռնի օրերին հայերի շարժուն և անշարժ գույքի, կալվածքների բռնագրավումը, կողոպուտը և յուրացումը կանոնավոր կատարելու համար, ինչպես հայտնի է, երիտթուրքական կառավարությունը ներքին գործոց նախարարություն է ուղարկում մի շարք ծածկագիր հեռագրեր, շրջաբերականներ, հրահանգներ, նպատակ ունենալով ցանկագրել և յուրացնել հայերին պատկանող ունեցվածքը: 1915թ. մայիսի 16-ի պաշտոնական հրամանի 34 հոդվածներից մի քանիսը վերաբերվում էին եկեղեցա-

կան հաստատություններին, նրանց պատկանող ունեցվածքին: Հոդված 2-ում նշվում էր, որ հայերին պատկանող շինությունները իրենց ապրանքներով, վարչական հանձնախմբերից արտոնություն ստացած պաշտոնյայի միջոցով պետք է փակվեին և կնքվեին: Հոդված 3-ում և 6-ում նշվում էր, որ գույքը (նաև եկեղեցական գույքը) իր արժեքներով, տերերի անուններով մատյաններում արձանագրվելու են, ապա, տարագրված հայ քնակչության տեղ հասնելուց և հաստատվելուց հետո, դրանք վերադարձվելու են տերերին:[22]

Իսկ իրականում թալանվում էին հայկական հոգևոր կենտրոնները, ոչնչացվում էին հազարավոր արժեքավոր ձեռագրեր: Այդպես՝ թալանելով Մեթաստիայի ս. Նշան վանքը, թուրք զինվորները, չգտնելով դարավոր այս վանքի գաղտնարանի բանալիները, կոտրում են պատին ագուցված երկաթյա դուռը և թալանում եկեղեցական թագեր, արժեքավոր ձեռագրեր, ոսկե և արծաթե իրեր, ընդամենը՝ 3000 կտոր իր և 293 ձեռագիր: Մեթաստիայի վանքերից թալանված իրերի մի մասը վաճառվում է քաղաքի շուկայում, մի մասն էլ ուղարկվում Կ. Պոլիս: Քանդվում և ավերվում է հայկական գերեզմանոցը, որի տապանաքարերը օգտագործում են սալահատակ կառուցելու համար կամ շինարարական այլ նպատակներով:[23]

Կորստի է մատնվում փայտե ասեղնագործության մի անկրկնելի նմուշ՝ Մեթաստիայի ս. Նշան վանքում պահվող Սենեքերիմ Արծրունի թագավորի գահը (X-XIդդ.):

Նշեցինք արդեն՝ պատմա-ճարտարապետական հուշարձանների հետ միասին մեծ է հայկական հնագույն ձեռագրերի կորուստը, որոնց ընդհանուր քանակը, նախօրոք չցուցակագրելու պատճառով, ցավոք հայտնի չէ:

Ոչնչացվել են միակ և հազվագյուտ ձեռագրերի օրինակներ, նաև X դարում Գրիգոր Նարեկացու ձեռքով գրված «Նարեկը»: Մշո ս. Կարապետ վանքի ս. Գևորգ վկայարանի մատենադարանը հարուստ է եղել խաչագարդ, անգին քարերով ընդելուզված մագաղաթներով: Վերջիններիս հետ միասին կորսվել են նաև Վարագավանքում պահվող 150 մագաղաթե ձեռագիր մատյանները:[24]

Արևմտյան Հայաստանի և, հատկապես, Վանի տարածաշրջանի ձեռագրերի և հնությունների մասին գրանցված տեղեկություններ է թողել Ն. Յա. Մառը: 1914թ. նոյեմբերին Ռուսական Կայսերական Գիտությունների Ակադեմիան ըստ Ն. Մառի զեկուցագրի՝ քննելով Վանի նահանգի հուշարձաններն ավերելու և կողոպտելու փաստերը, որոշում է կայացնում գիտական արշավախմբեր ուղարկել Վան և գրավված մյուս շրջաններ, մշակութային արժեքները փրկելու համար: Փաստ է, որ միայն հնագիտական հարցերը չէ, որ հետաքրքրել են Մառին. ռազմական իրադրության պայմաններում, նա աշխատել է թույլ չտալ պատմական հուշարձանների կորուստը, այդ խնդիրը նրա գործուղման պաշտոնական նպատակներից էր:[25] Իրոք՝ Մառը նպատակ ուներ միջոցներ ձեռնարկել՝ պահպանելու կովկասյան ճակատի հնագիտական արժեքները: Այդ առնչությամբ նա հետագայում, մասնավորապես, գրում է. «Պատմական հուշարձանների պաշտպանության դիրքերից հանդես եկող որևիցե կազմակերպության բացակայությունը խիստ անպաշտպան վիճակում թողեց երկրամասի ձեռագրերի հավաքածուները, որոնք դարձան բոլոր ցանկացողների բաժինը, ավելի հաճախ՝ տգետ գիշատիչներինը»:[26] Ըստ նրա՝ ռուսական զորքերի

նահանջի ժամանակ, Աղթամարի Կաթողիկոսի օգնականին միջոցներ են առաջարկել՝ պահպանելու գրական հուշարձանները և մենաստանի ձեռագրերը լաստանավ են քեռնվել, բայց ինչ-ինչ պատճառով դրանք խորտակվել են:[27]

Լիմ մենաստանի վանականները ձեռագրերը թուրքերի ձեռքը չընկնելու համար, թաքցնում են գետնի տակ, հույսով, որ կարճ ժամանակ անց, հարմար պահի նորից տեր կկանգնեն դրանց: Այս ձեռագրերի ճակատագիրն անհայտ է: Ըստ Մառի՝ ականատեսները վկայում են, որ ձեռագրերի մնացորդներ են թափված եղել Վանից մինչև Բիթլիս ընկած ճանապարհին:[28] Մեկ այլ վկայության համաձայն նա նշում է, որ Աղթամարի վանքում եղել են հարյուրավոր ձեռագրեր, որոնց մի մասը փրկվել է, ուղարկվել Էջմիածին, իսկ Լիմից հասել է եկեղեցական առարկաների մի մասը և 10 ձեռագիր, մոտ 500 ձեռագիր մնացել է կղզում: Կտուց անապատի եկեղացական իրերը և ձեռագրերի մի մասը թաքցվել են, մի մասը՝ ոչ:[29]

Ն. Մառին հասցեագրված նամակում սանիտար Ա. Ֆլորենսկին, որը 1915թ. ծառայության բերումով գտնվում էր Վանում, գրում է, որ Պելու գյուղի ավերված եկեղեցու ձեռագրերը և մանրանկարները հավաքելով ուղարկել է Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսյանին՝ Էջմիածին տեղափոխելու համար: Ի դեպ՝ Ա. Ֆլորենսկին փրկում է նաև եկեղեցական թանկարժեք իրեր, հիմնականում խաչեր և մի Ավետարան, որոնք Բորժոմում հանձնում է կոմսուհի Վորոնցովային, իսկ վերջինս էլ՝ Մեսրոպ Եպիսկոպոսին:[30]

Որոշ տվյալներով, հայերի համար այդ ողբերգական ժամանակաշրջանում, վերացվել են 20000-ից ավել ձեռագիր մատյաններ և հնատիպ գրքեր:[31]

Բազմաթիվ են ցեղասպանության և դրա հաջորդող տարիներին հայոց մշակութային արժեքներին առնչվող ողբերգական միջադեպեր: Այսպես՝ 1923 թվականին, Մալաթիայում Բայրամի առաջին օրը տոնելով, թուրքերը հանդիսավոր խարույկի բոցերին են հանձնում հայկական ձեռագրերը: 12 տարեկան մի հայ տղա փորձում է կրակից ազատել այն գրչագիր ավետարանը, որի առջև ամեն երեկո իրենք գաղտնաբար ծնկաչոք աղոթում էին: Այդ տեսնելով, վայրենի ամբոխն, ավետարանի հետ միասին, տղային գցում է կրակի մեջ:[32]

Այդ ծանր օրերին եղան անհատներ, ովքեր իրենց ազգային ոգու ճիչն արտահայտեցին՝ փրկելու և պահպանելու մեր դարավոր մշակութային արժեքները: Հիրավի սխրագործություն էր «Մշո Ճառընտիր»-ի փոխադրումը: Այս նշանավոր հսկա հուշարձան-ձեռագրի ճակատագիրը բոլորին է հայտնի: Հետաքրքիր ճակատագիր ունեցավ նաև արվեստի մի այլ գլուխգործոց՝ Մշո Առաքելոց վանքի մեծարվեստ ու ասեղնագործ դուռը (1134թ.), որը մշեցիք, ինչպես հայտնի է, ուսերի վրա հասցնում են Էջմիածին, ապա Երևան:

Նոր ավերածություններից զերծ չմնաց նաև «հազար ու մեկ» եկեղեցիների քաղաքամայր Անին: 1921թ. մայիսի 25-ին Ռիզա Նուրին նամակով թելադրում է արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին, որ «Անի քաղաքին յուշարձաններու մնացորդներն ու հետքերը երկրագունտի երեսէն պետք է ջնջուին: Դուք մեծ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլաք Թուրքիոյ՝ այս նպատակը իրագործելու գիծով»:[33]

Հայկական ճարտարապետական յուրաքանչյուր կոթող մեր պատմության հավաստի քարե «փաստաթուղթն» է, և լռությամբ արդարության ձայնին սպասող մեր անցյալի ականատեսը: Մինչև օրս Թուրքիայում հանգիստ ոչնչացվում է այն, ինչ հայկական է: «Լավագույն» դեպքում դրանք օգտագործվում են իբրև շտեմարան, հարդանոց, ախոռ ու բնակարան, ամառանոց, զորանոց կամ մզկիթ ու «մինչև իսկ պարասրահ ու անառականոց, ինչպես Աֆիոն Գարահիսարի եկեղեցին»:[34] Ավերելով հայկական մշակութային հուշարձանները և անգամ նրանց խղճուկ մնացորդները, հրապարակավ պատճառաբանվում են, թե արդյունքը բնական աղետներն են, որ կարծես ընտրողաբար է մոտենում, կործանելով միայն հայկական կառույցները: Օրինակները բազմաթիվ են. ճարտարապետության անկրկնելի գոհարներից մեկի՝ Խծկոնքի վանքային համալիրից (IX-X դդ., Կարսի նահանգ) կանգուն է միայն ս. Մարգիս եկեղեցին, Ծպնիի եկեղեցին (VIIդ., Կարսի նահանգ) վերածվել է մզկիթի, Կարսի ս. Առաքելոց եկեղեցու (X-XI դդ.) գմբեթին խաչի տեղ կտեսնենք թուրքական կիսալուսինը:

Ողբալի է ճարտարապետական անկրկնելի մարգարիտի՝ Աղթամարի ս. Խաչ եկեղեցու (915-921թթ.) վիճակը:

Հարկ է նշել, որ բազմիցս հարց է բարձրացվել Թուրքիայի տարածքում եղած պատմա-ճարտարապետական հուշարձանների վերականգնման անհրաժեշտության մասին, որը մեր կարծիքով պետք է դառնա ՀՀ արտաքին քաղաքականության պահանջատիրական կարևոր հարցերից մեկը:

Վերոհիշյալ փաստերը Եղեռնի տարիներին հայ մշակույթի կրած կորստի մի չնչին մասն է: Այդ փաստերը վկայում են, որ հայկական մշակութային արժեքների գենոցիդը, հազարամյակների ընթացքում ստեղծված և համաշխարհային մշակույթի ոսկե ֆոնդն անցած մշակույթի անվերադարձ կորուստը Հայոց ցեղասպանության բաղկացուցիչ մասն է:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 1991, էջ 562:
[2] Օրմանյան Մ. արք. Ազգապատում, հ. Գ., Երուսաղեմ, 1927, էջ 5029-5030:
[3] «Արարատ» (ամսագիր «սբ. Էջմիածին»), 1896, դեկտեմբեր, էջ 585:
[4] Նույն տեղում:
[5] «Դրօշակ», օրգան Հ. Յ. Դաշնակցութեան, Վիեննա, 1896, թիւ 10, ապրիլ, էջ 77:
[6] Նույն տեղում, թիւ 13, մայիս, էջ 100:
[7] Նույն տեղում, թիւ 2, յունուար, էջ 15:
[8] Նույն տեղում, թիւ 4, փետրվար, էջ 29:
[9] Նույն տեղում, թիւ 16, յունիս, էջ 123-124:
[10] Նույն տեղում, թիւ 11,ապրիլ, էջ 86:
[11] Օրմանյան Մ. արք. Հայոց եկեղեցին, Թիֆլիս, 1913, էջ 259-269:
[12] Գէորգ Մեսրոպ. Թուրքիոյ հայոց կորուստները 1915-1922, «Հայաստանի Կոչնակ» շաբաթաթերթ, Պոստոն, 1931, թիւ 25, էջ 776-779:
[13] Ղազարեան Հ. Գ. Ցեղասպան թուրքը, Պէյրութ, 1968, էջ 220:
[14] Ընդարձակ Օրացոյց սբ. Փրկիչ Հիւանդանոցի Հայոց, Կ. Պոլիս, 1904, էջ 349-385:

[15] Յուշամատեան Մեծ Եղեռնի, խմբգր. Անարոնեան Գ., Պէյրութ, 1965, էջ 1020-1028:
[16] Տե՛ս Գ. Մեսրոպ, նշվ. աշխ., էջ 777:
[17] Տե՛ս Ղազարեան Հ. Գ. նշվ. աշխ., էջ 210:
[18] Սաֆրաստյան Ա. Խ. Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի Արդարադատության և դավանանքների մինիստրության ներկայացված եկեղեցիների և վանքերի ցուցակերն ու բաքրիխները (1912-1913), «Էջմիածին», Ա (հունվար), 1965, էջ 42:
[19] «Անի» պարբերական, թիվ 2, 1992, էջ 18 (Հայաստանի մեկ այլ ողբերգությունը):
[20] «Հայրենիք» օրաթերթ, Պոստոն, 1980, 14 նոյեմբերի:
[21] Տե՛ս Գ. Մեսրոպ, նշվ. աշխ., էջ 809:
[22] Տե՛ս Ղազարեան Հ. Գ. նշվ. աշխ., էջ 227-235:
[23] Նույն տեղում, էջ 236-237:
[24] Քոլանջյան Ս. Հայկական կոտորածները և մեր ճեռագրական կորուստները, «Էջմիածին» ամսագիր, 1966, թիվ Ը, էջ 28; թիվ Ե-Է, էջ 143:
[25] «Անի» պարբերական, թիվ 1, 1992, էջ 9-10 (Մնացականյան Ստ. Նիկողայոս Սառ):
[26] «Անի» պարբերական, թիվ 2, 1992, էջ 3 (Ակադեմիկոս Ն. Յա. Մառի զեկուցագրերը Թուրքահայաստանի ճեռագրերի ու հնությունների գրանցման մասին):
[27] Նույն տեղում:
[28] Նույն տեղում:
[29] Նույն տեղում, էջ 4:
[30] Նույն տեղում, էջ 6:
[31] Хулавердян К., Саакян Р. Геноцид армян сквозь призму десятилетий, Ер., 1995, стр. 37-38.
[32] Տե՛ս Քոլանջյան Ս. նշվ. աշխ., թիվ Թ-Ժ, էջ 93:
[33] Baghdjian Kévork. La confiscation par le gouvernment turc, des biens arméniens..., Montréal, Québec, Canada, 1987, p. 56.
[34] Տե՛ս Տաճատ Հ. վրդ. Եարարմեան. Հայաստանի վանքերում եւ եկեղեցիներում մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-25 տարիներում, Վենետիկ, 1995, էջ 30-31:

Резюме

Геноцид армянских культурных ценностей на территории Османской империи.

Мери Кешишян

Национальное своеобразие любого народа выражается в его культуре. Каждый, раскрывающий прошлое архитектурный памятник – это говорящий свидетель армянской истории.

Уничтожение армянских историко-архитектурных памятников и других культурных ценностей в Западной Армении является составной частью Геноцида армян.

Поэтому так необходим учет уничтоженных армянских историко-архитектурных памятников 90-х годов XIX и XX веков (монастыри, церкви, часовни, святые места, кладбища, хачкары, рукописи и т.д.), который мы продолжаем по мере сбора новой информации о них.

Summary

The Destruction of Armenia Cultural Heritage on the Territory of Ottoman Turkey.

Mary Keshishyan

Each nation is expressing its national selfness in its culture. Every historical monument even ruined is the stable witness to the Armenian history.

The destruction of Armenian historical-architectural monuments and other cultural values (churches, gravetombs, memorials, castles etc.) situated on the territory of Western Armenia was component part of policy of Armenian Genocide. That is why it is important to register destructed Armenian monuments, systematize the existing information and find new information about their current condition.